

Անհատը և թանաքի գույնը

Նախկինում ես չէի մտածում, թե ինչ գույնի թանաքով ուղղել երեխաների գրավոր աշխատանքները: Կարմիր է, թող կարմիր լինի: Ի՞նչ տարբերություն: Սակայն օրերս Մանեն ինձ հարկադրեց թանաքի գույնը դիտել որպես դաստիարակության պրոբլեմ: Նա բացեց մաթեմատիկայի իր տետրը, որը հենց նոր էի վերադարձրել իրեն և լաց եղավ:

- Ինչու՞մն է բանը, Մանե,- անհանգստացա ես:

Դասն ընդհատվեց: Մանեն լալիս է, արցունքները թափվում են բացված տետրի վրա և ապականում սխալների տակ տարված կարմիր գծիկները:

- Ես չեմ կարողանում մաթեմատիկա սովորել...Չեմ կարողանում վարժություններ լուծել: Ի՞նչ անեմ... Ես շարունակ սխալվում եմ...Տետրիս մեջ միայն կարմիր գծեր են...

Ես, իհարկե, հանգստացրի աղջկան, քաջալերեցի: Սակայն իմ առջև ծառայած թանաքի գույնի և երեխայի անձի դաստիարակության միջև հնարավոր կապի խնդիրը: Ճշտեմ սույն խնդիրը: Բանն այն է, որ մանակավարժի համար կարմիր թանաքը գրավորի սխալներում երեխային կողմնորոշելու միջոց է: Հիշեցի աշակերտական տարիներս, ինչպիսի հուզմունքով էի բացում ուսուցչի վերադարձրած տետրը: Կարմիր գծերն ինձ երբեք ուրախություն չէին պատճառում: «Վատ է: Միսալ է: Ինչպե՞ս չես ամաչում», -ասես մանկավարժիս ձայնով ասում էր ինձ յուրաքանչյուր կարմիր գծիկ: Ուսուցչիս նշած սխալները միշտ վախեցնում էին ինձ և ես պատրաստ էի տետրս դնել նետել կամ մեջից պոկել չարագուշակ էջը, որն ասես մանկավարժի ինձ կշտամբող նշաններով էր լցված: Երբեմն տետրը ոչ միայն կարմիր գծիկներով և նշումներով էր խզբզված լինում, այլև դրանք ալիքվում էին ամբողջ տողի երկայնքով:

Բայց այդ դեպքում էլ ի՞նչ աշակերտ, եթե առաջադրանքները միայն պիտի անսխալ կատարեի: Նայում էի այդ : «Վատ է: Միսալ է: Ինչպե՞ս չես ամաչում» տագնապալի ազդանշաններին և բարկանում ինքս ինձ, որ չեմ կարողացել սխալներից խուսափել, բարկանում էի նաև մանկավարժի վրա, որը սիրահարված էր կարմիր գծիկներին: «Կանգ առ, մինչև սխալներդ չուղղես, ճամփադ չես շարունակի», -ասում էին ինձ ծուռմռտիկ կարմիր գծիկները, իսկ ես այնպես էի ուզում առաջ շարժվել: Թեկուզ սխալներ ունեմ, բայց ինձ մի կասեցրեք: Ա՛խ դու, կարմիր թանաք, ինչ լավ կլիներ, որ ընդհանրապես գոյություն չունենայիր, որ գիտնականները մի հարյուրամյակ ևս գլուխ կտրեին քեզ հայտնագործելու վրա:

Ինչպե՞ս էին տետրի այդ կարմիր գծիկները փչացնում տրամադրությունս, ինչպե՞ս էին ինձ երբեմն արցունքի հասցնում: Դեռ այն ժամանակ տետրիս այդ կարմիր գծիկներն ընդունում էի, որպես մատնագարկեր, որոնցով ինձ պարզևատրում էր ապագայիս մասին հոգացող իմ ուսուցիչը: Բայց ինչպիսի բարի դիտավորություններով էլ, որ նա ղեկավարվեր, տետրի այդ կարմիր գծիկներն ինձ ծայրաստիճան դառնացնում էին: Դառնացնում էին, որովհետև ես անչափ ուզում էի տետրիս մեջ սխալ թույլ չտալով

հանդերձ, ոչ թե աշխատանքից գլուխ չհանելու իմ անընդունակության պատճառ հանդիսացող մանկավարժական գրգռվածության, այլ մանկավարժական բարյացակամության, նրբագայության, քնքշանքի նշաններ տեսնել: Կարմիր գծիկները իմ անհաջողություններն էին ցույց տալիս, և ես տեսչում էի տեսնել ու իմանալ, թե ինչն է դուր գալիս ուսուցչին իմ առաջադիմության գործում:

Անցան տարիներ, և այժմ, երբ ինքս մանկավարժ դարձա, մոռացա այդ ամենի մասին, մոռացա, որ ես էլ եմ աշակերտ եղել և տանջվել կարմիր թանաքի պատճառով: Այդ նույն թանաքով սկսեցի ջանասիրաբար նաև իմ աշակերտների տետրերում երևացող սխալներն ընդգծել: Տառը հավասար չի գրված, թեք է, տակը՝ կարմիր գիծ, նախադասությունը սխալ է, ամբողջ տողի երկայնքով կարմիր գիծ: Եվ, իհարկե, միաժամանակ նյարդայնանում եմ, ապրումներ ունենում, ինչպիսի անուշադրություն, ցրվածություն, անգիտություն, անկարողություն: Իսկ օրերս Մանեն ինձ հիշեցրեց, որ ես էլ եմ ինչ-որ ժամանակ աշակերտ եղել և ցույց տվեց, որ մանկավարժի կարմիր թանաքի հետ իր հարաբերությունը ոչնչով չի տարբերվում մանուկ ժամանակվա իմ հարաբերությունից: Հենց այդ գծիկներով էլ ես նրանց հարկադրում եմ նյարդայնանալ, ապրումներ ունենալ, լաց լինել: Իսկ չէ՞ որ ես ուզում եմ՝ ամեն ինչ ճիշտ հակառակը լինի:

Հարկավոր է շնորհակալություն հայտնել աղջկան. նա ինձ հանգեցրեց մի մտքի, որը գուցե իմ պատգամն է դառնալու.

Եթե ես ուզում եմ մարդասիրության հիմունքների վրա դաստիարակության իմ մեթոդիկան կատարելագործել, ապա չպետք է մոռանամ, որ ինչ-որ ժամանակ ինքս էլ եմ աշակերտ եղել, և պետք է հասնեմ այն բանին, որ այսօրվա իմ սաներին չտանջեն այն նույն ապրումները, ինչ երբևէ ինձ են տանջել:

Այսպես իմ առջև ծառայած թանաքի գույնի խնդիրը երեխայի անձի դաստիարակության պրոցեսում:

Ի՞նչն ավելի շատ կօգնի երեխային՝ ավելի հաճախակի նշել թույլ տված սխալները, թե՞ ձեռք բերված հաջողությունները: Ինչի՞ վրա ավելի ճիշտ կլինի բևեռել երեխայի ուշադրությունը՝ ինչպես չի՞ կարելի անել, թե՞ ինչպես պետք է անել: Ի՞նչը ավելի շատ կնպաստի նրա զարգացմանը՝ անհաջողության դառնությունը, թե՞ հաջողության ուրախությունը: Եվ եթե միավորենք այս բոլոր հարցերը մեկ խնդրի մեջ, ապա այն հետևյալ բովանդակությունը կունենա՝ գուցե արժե անսպառ քանակությամբ «Վատ է: Մխալ է: Ինչպե՞ս չես ամաչում» դիտողություններ արտահայտող կարմիր թանաքը «Լավ է: Ուրախ եմ քեզ համար: Շարունակիր այդպես: Ապրես:» անսպառ քանակությամբ խրախուսանքներ արտահայտող կանաչ թանաքով փոխարինել:

Հասկանալի է, չի կարելի այդ խնդիրը միակողմանի լուծել:

Թանաքի գույնի հետևում մանկավարժական տեսակներ են կանգնած, և նրանցից մեկի ընտրությունը կամ մյուսի որոնումը լուրջ կշռադատում է պահանջում:

Հիմա իմ սեղանին երկու գրիչ է դրված՝ կարմիր և կանաչ թանաքներով: Երեխաների գրավոր աշխատանքները ստուգելիս կանաչ թանաքով ընդգծում և կրկնագործում եմ այն ամենը, ինչ հավանում եմ, հաջողություն համարում: Կանաչ գույնի պայմանական նշանները երեխաների ջանքերի ու հաջողությունների նկատմամբ իմ բարյացկամ վերաբերմունքի ազդանշաններն են: Ես նկատել եմ, որ ամեն անգամ երեխաների գրավոր աշխատանքները կանաչ գրիչով ստուգելուց հետո տրամադրությունս բարձրանում է, ավելի շատ տեղեկություն եմ ստանում, թե նրանք ինչ են սովորել, ինչի են արդեն ընդունակ:

Երեխաների կողմից այս նորարարության գնահատման մասին ես այսօր իմացա, երբ նույն Մանեն մաթեմատիկայի տետրը ինձանից ստանալով հանկարծ ուրախ բացականչեց.

-Լուծե՛լ եմ, լուծե՛լ, տեսե՛ք որքան շատ եմ լուծել: Սիրում եմ մաթեմատիկան: